Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի» համար ՖՏ 2019.

Ստորագրվեց «Հեռավոր հայկական համայնքներում ՍՏԵՄ (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա) կրթության մշակույթի և միջավայրի հիմնման և արդիականացման» ծրագիրը

2020 թ. մարտի 25-ին, ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադան և «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին գործերի ղեկավար Զարուհի Տոնոյանը ստորագրեցին «Հեռավոր հայկական համայնքներում ՍՏԵՄ (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա) կրթության մշակույթի և միջավայրի հիմնման և արդիականացման» ծրագրի 60,985 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագիրը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում:

Ծրագրի նպատակն է վերանորոգել Արմավիրի, Արագածոտնի, Լոռու և Տավուշ մարզերի հեռավոր շրջաններում գտնվող թիրախային 4 միջնակարգ դպրոցները և հիմնել լաբորատորիաներ, ինչպես նաև ապահովել վերջիններիս համար անհրաժեշտ բոլոր սարքավորումները բնագիտական առարկաների պրակտիկ դասընթացներն իրականացնելու նպատակով: Այս ծրագիրը հնարավորություն կընձեռնի ուսանողներին հաճախել ՍՏԵՄ-ի (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա) որակյալ կրթության չափանիշներին համապատասխանող դասընթացներին և դառնալ ոլորտի մրցակից մասնագետներ, ովքեր երկարաժամկետ հեռանկարում կաջակցեն իրենց երկրի արդյունաբերության և տնտեսության զարգացմանը:

Արդյունքում, հեռավոր շրջաններում բնակվող մոտ 610 ուսանողներ և ուսուցիչներ օգուտ կքաղեն այս ծրագրից: Ավելին, ակնկալվում է, որ լաբորատորիաները և բոլոր սարքավորումները հասանելի կլինեն նաև հարևան մարզերից եկող ուսանողների և ուսուցիչների համար: